




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍ

ՄԲԱԶԱՅԱԿԱՆ ՄԵՍԻՍ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ՀԱՍՈՒՆԵՆԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌԼՄ



1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցամսեայի բաժանորդագիւնն է մեկ մեծիս անոնց համար որ ի Կ. Պօլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաքնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրիկող համար՝ Չորս (4) ֆրանկ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պօլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանիք վերջնականացես պիտի ճշտուին: —

Մեկ թիւը՝ մեկ դանեկան է:

2. Արձագանգը կը հրատարակուի Եւրոպ օրերը:

3. Խնքագրութիւնս պարտաւորեալ չի՝ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակելու իրեն դրկուած ո՛ր եւ է յօդուած:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատւութիւնը սակ-բողջովին կը մնայ գրողներուն փայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

7. Ծանուցմանց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱԹՈՂ ԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ

Առաջին Տարի	29 Յուլիս 1911	Թիւ 6.
-------------	----------------	--------

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԱՄԵՆԱՍՈՒՐԱ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՏՐԻՏ



(Շարունակութիւն)

Ի 25 Յունիսի Համաժողովը բացուեցաւ: Առաւօտուն հանդիսաւորապէս Ձայնաւոր Պատարագ մատուցց Մատրիտի Եպիսկոպոսն, որուն ներկայ էին Քահ. Դեպպանն և միւս եպիսկոպոսներ, և Մայր Թագուհին, Ինֆ. Իզպպէլլա, Թագաւորին քոյրն՝ Ինֆ. Մաքրիա Թէրէզա, և Տօն Գարլոս՝ որ առաջին ամուսնութեամբ Թագաւորին քուայրն եղած է: Աքանջելի երգեցողութեամբ կատարուեցաւ քառաձայն պատարագը մեծ երգեհոնին միաբանութեամբ:

Յետ միջօրէի ժամը 6 ին թացնան հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ս. Փրանկիսկոսի եկեղեցւոյն մէջ, որուն որմանկարները նշանակելի են: Սրբավայրն ամբողջ կը շողար լոյսերու մէջ: Դասին մէջ՝ առաջակողմը,

դէպ առ ժողովուրդն, նախագահական աթոռոյ վրայ բազմած էր Կարգ. Ակուիրրէ, ալ կողմն ունենալով Քահ. Դեսպանն ու ձախ կողմը Ամենապ. Հոգեւոր Տէրը և Նամուրի Եպիսկ. Գեր. Հէյլէն, որ Համաժողովոյ մշտա-տե Թանձնախումբին Նախագահն է: Դասին ետեւի կողմը տեղ առած էին Եպիսկոպոսներ: Իսկ աջակողմը զարգարուն գահ մը դրուած էր, Ն. Թ. Բ. Տօն Գարլուսի համար, որ պալատականներով կը ներկայացնէր զթագաւո-րը: Թագուհիք և Ինֆանթաներն բազմած էին իրենց յատկացեալ տեղերը: Ընտրեալ բազմութիւն մը, Սպանիոյ ամբողջ ազնուականութիւնն ու բար-ձրաստիճանն պաշտօնեայք և բարեպաշտ ժողովուրդք, լեցուցած էին զե-կեղեցին:

Վեհօրէն երգուեցաւ « Ե՛կ Սուրբ Հոգի ստեղծող էից » շարականը: Որմէ յետոյ ինֆանթէ Տօն Գարլուս յոտընկայս կարդաց « Սպանիոյ ողջոյնն առ Համաժողովն », բարի գալուստ մաղթելով առ Կարգ. Պատուիրակն, առ Պատրիարքն կաթող. Հայոց և միւս Եպիսկոպոսներն, Համաժողովին մասնակցելով յանուն Արքայական Ընտանեաց:

Ինֆանթէ Տօն Գարլուս ըսաւ .

Մինչ վեհափառ Թագաւորն կը յանձնէր ինձ Ս. Հաղորդութեան միջազգային ԻՖ. Համաժողովին բացման նստին մէջ զինքն ներկայացնելու պատուաւոր պաշտօնը, հրա-մայեց ինձ որ ըսեմ Ձեզ թէ ո՛րքան սրտի մտօք ինքն ալ կը ձայնակցի ձեզի, և ինչ-պէս Ն. Վ. Թագուհին և ամբողջ Թագաւորական ընտանիքը կը մասնակցի՝ Հաղորդու-թեան մեծափառ Ս. Խորհրդոյն մէջ ներկայ գտնուող Յիսուս Քրիստոս Թագաւորին յայտնուած հաւատոյ ու սիրոյ այս շքեղ ցոյցին. նմանապէս հրամայեց ինձ որ Նորա անուամբ բարի գալուստի սիրալիր ողջոյն մը մատուցանեմ ժողովոյս մէջ բոլոր ներկայ գտնուողներուն, ի մասնաւորի Ձեզ, վսեմաշուք Տէ՛ր Կարգինալ, որ Քահ. Պատուիրակութեան բարձր պաշտօնով եկած էք անոր նախագահելու Մի Սրբ. Հայրը՝ Հռովմայ Քահանայապետը, իրեն ներկայացուցման բարձր պաշտօնը չէր կրնար յանձնել ու և է ուրիշ անձի մը՝ որ հսկայազոյն ըլլար մեր սիրեցեալ Վեհապետին կաթողիկէի և Սպանիացոյ զգացութեան, քան Ձեր անձը, զոր Նորին Վեհափա-ռութիւնը՝ գնահատելով Ձեր սուաքինութիւններն ու արժանիքը, Ս. Գահուն ներկա-յացուց՝ Թովետոյի Արքեպիսկոպոսութեան համար՝ Եթէ Լոնտրայի, Գոլոնիոյ և Մոն-րէալի մէջ գումարուած Ս. Հաղորդութեան վերջին Համաժողովներուն նախագահելու համար Նորին Սրբութիւնն՝ Կարգ. Վանութէլլիի նման մեծապարգ չի անձնաւորու-թիւն ընտրած էր, սակայն իւր բարձր իմաստութեամբ այնպէս դատեց որ այս սպա-նիական հայրենեաց մէջ, կաթողիկէ ազգերու ամենակաթողիկէին մէջ ո՛չ այլ ոք կրնար աւելի արժանաւորապէս ներկայացուցիչ ըլլալ վեհափառ Փոխանորդին Յի-սուս Քրիստոսի՝ քան Դուք, որ անձնական Ձեր արժանեաց կը զուգաւորէք սպա-նիական եկեղեցւոյ նախագահի բարձր արժանապատուութիւնն և Ձեր անձին Վրայ

կը միաւորէք Եւգինէոսներու, Խիմենէաներու, Չիսնէրիններու փնտռանք աւանդութիւնները:

Եւ Դուք, ո՛վ հաւատացեալ Դիտապետք բովանդակ աշխարհի, որ այսու առթիւ հոս ժողովուած էք, բարեա՛ւ ըլլայ ձեր գալուստը: Նորին Վեհափառութիւնը կը յուսայ որ երբ վերադառնաք ձեր երկիրները, ձեր սրտերուն մէջ միասին տանիք կաթողիկէ Սպանիայէ հաճոյական յիշատակ մը: Կը խնդրեմ Աստուծոյն որ իւր ամէն օրհնութիւնները սիրէ այս պայծառափայլ Համաժողովիս վրայ, որպէս զի իւր աշխատութիւնը արգիւնաբեր ըլլան, և համընթանան ևս քան զեւ տարածելու յաշխարհի Ս. Հաղորդութեան մէջ ներկայ Յիսուսի Քրիստոսի պաշտամունքը, և ժողովրդոց միջև ամրապնդելու այն սուրբ եղբայրակցութիւնը՝ որ, առանց ուրանալու հայրենիքի դադափարը և փառաւոր աւանդութիւններն զորս իւրաքանչիւր կը պահպանէ իբր թանկագին գանձ, զամէնքն ալ միացնէ մի և նոյն սիրով, մի և նոյն հաւատքով, կապմելու համար մէկ հօտ ու մէկ Հովիւ:

Յաջորդեցին այլ և այլ ճառեր ու գեղեցիկ երգեր. մանաւանդ Հ. Էսլափայի հիանալի կտորն, « Դու ես վէմ » քառաձայնը. որոյ « և դըրունքը դժոխոց զնա մի՛ յաղթահարեցին » մասը՝ կատարեալ պատերազմ մը կը նկարէր, շաչիւն և շառաչիւն, փողի հնչիւններ, որոտումներ, և կ'աւարտէր կատարիալ յաղթանակաւ մը: Կարգացուեցան մասնակցութեան այլ և այլ հեռագիրներ ու նամակներ, ընդմիջուելով ընթերցումը ծափերով ու կեցցի ներով:

*
**

Երեք օր կը տեւէն Համաժողովին նիստերը ամբաւ ժողովրդեան մասշնակցութեամբ, որոնք անմասն բարի օրինակով շինութիւն կուտան ամեն նուն: Հազարներով կը մատչին ի Սեղան Սրբութեան: — Ընդհանուր նիստը կը գումարուի առաւօտները, յորում կը կատարուին ճառասացութիւններ, խորհրդակցութիւններ, Ս. Հաղորդութեան ջերմեռանդութիւնը օր ըստ օրէ աւելի տարածելու համար ամեն ազգաց մէջ. իսկ յետ միջօրէի մի և նոյն և աւելի մանրամասնեալ ծրագրով մասնակի համախմբումներ տեղի կ'ունենան՝ եկեղեցեաց մէջ կամ ուրիշ յարմար վայրեր. ոմանք համագային, իսկ այլք՝ մէնմի ազգի առանձինն: Ընդհանուր առաջին նստին մէջ պիտի խօսէր Ամենապ. Հոգևոր Տէր. բայց քիչ մը անհանգիստ ըլլալուն պատճառաւ յետաձգուեցաւ երրորդ նստին, որ ի 28 Յունիսի: Այն առաւօտ երկուսոր տեսարան մը պարզուած էր երբ 35,000 սպիտակազգեստ աղջկունք իւրեւ զուարթնաց խումբեր՝ կը մատչէին Ս. Հաղորդութիւն առնելու: Նոյնքան ալ մատուղերով տղայք, անմեղութեան բոյրովը: Այս

նստին մէջ խօսեցաւ Հոգեւոր Տէրը. Ողջունեց Կաթողիկէ Սպանիոյ անդըրդուելի հաւատքը. Արեւելք ևս կը միանար Արեւմտից, ի փառաբանութիւն Սուրբ Խորհրդոյ. Կաթողիկէ Հայք անկեղծ հաւատքով կ'երկրպագեն Սիրոյ Աստուծոյն, Սուրբ Հաղորդութեան Խորհրդոյն, որոյ հիանալի է պաշտամունքը մեր մէջ ի սկզբանէ անտի մինչև արդի ժամանակները. դարերու հալածանաց, և վայրավատին թափառմանց մէջ Նա միայն եղած է ասփանք նեցուկ և կայանք. յիշեց եռանգուն քահանայից անգուլ ջանքերը տարածելու այս Հաւատքն ու Սէրը, Կաթողիկէութեան շրջանակն ընդարձակելով միշտ. մաղթեց կաթողիկէից մէջ միաբանութիւն և խնդրեց Աստուծմէ Ս. Հաւատքի ու Եկեղեցւոյ յաղթանակը : — Կ'ընդմիջուէր որոտընդոտ ծափերով : Այս ճառը խորին տպաւորութիւն ձգեց ամենուն վրայ :

Ջանազան ճառերէ և երգ'որէ վերջը Թագաւորն ու արքայական ընտանիքը փառաւորապէս մտաւ եկեղեցին, զիմաւորուելով Կարգինալէն և Եպիսկոպոսներէն, միջ է երգեհանը կը նուագէր Թագաւորական քայլերգը, ահագին ծափահարութեանց մէջ : Ալֆօնս Թագաւորը կը յառաջէր Հաղարապետի համազգեստ հագած, նշանները դրած և սուր կապած, Զինուորական արժանեաց գօտւով : Աջ կողմն էր Թագուհին Վիկտորիա : Կը հետեւէին ինֆանթա Իզապէլլա, Թերէզա և Լուիզա և Ինֆանթէ Տօն Գարսիա. ապա Նախարարապետ Գանալէխաս և միւս Նախարարք, Պալատականք Զինուորական և մայրաքաղաքին մեծամեծ պաշտօնեայք : Դասուն մէջ տեղը զինուորական բարեւ մը տալով, զնաց բազմեցաւ զահուն վրայ : Օտարական Եպիսկոպոսունք կարճ խօսքերով ամպիոնէն բարեմաղթութիւններ ըրին Թագաւորին, Թագուհւոյն և Սպանիոյ. Ժողովրդեան խանդավառութիւնն ու ծափեր աննկարագրելի են : Ապա Թագաւորը ոտքի վրայ կանգնած, ամուր ձայնով և արքայական վեհութեամբ կարգաց հետեւեալ ճառը.

« Վսեմաշուք Տէր, այս Ժողովս ջնորհաւորելու համար ինծի ներկայացուցիւ կաթողիցի ինֆանթ Գարսիա, յանձնարարելով իրեն որ ձեզ հաղորդէ այն զգացումներն որ կը լնուն իմ եւ թագուհւոյն հոգիին՝ այսօր հանդիսաւոր առթի մը մէջ : Այսօր, ի վերջ կոյս Համաժողովին, կը ցնծաւ ծնունդով Ժողովրդոց այս թագնութիւնը որ հոս հաւաքուած են, զանազանուած իրենց պատմութեամբ, իրենց յեղունակով, իրենց բարեկրով. բայց միացած ի մի հօս, ի մի բոբոսեալ հայոց սիրոյ Ս. Հաղորդութեան. վսեմ կարողութիւն Հաւատոյ եւ Սիրոյ :

Մենք կու գանք ըսելու ձեզ, ո՛վ Տէաբ, որ հոս համախմբուեցա՞մք մեր երկիրներէն, քե՛ն ինչպիսի որ սիրելի եղաւ ձեզ մեր գաղութը, նոյնպիսի կ'ուզենք որ ձեզի հաճելի ըլ-

շան մեզ հետ անցուցած օրերն : Եւ հիմա երբ բաժանման մեր ողջոյնը կը մասնուցանենք մեզ, ու շնորհակալ կ'ըլլանք մեր գործակցութեան համար, կ'աղայենք մեզ նաեւ որ, մեր հայրենիքները վերադառնալով, չմոռնաք զմեզ, եւ մեր սիրական Սպանիան նկատագրեք մեր հայրենակցաց, անոր վրայ խօսիք անոնց՝ պատկերացնելով զայն որպիսի է՝ նա եւ յետագայ դրոշմի գիծեր՝ հաւաստեալ, հեզահամբոյր, ասպնջական: Հոսկ ողջոյնն ըլլայ նորա համար որ կը ներկայացնէ Հռովմայ Բաժանայապետը, Կաթողիկէ Ժողովրդեան ընդհանրական Հովիւր: Ըսե՛ք Նորին Սրբութեան քե՛ր քաղուհին եւ ես կը մտաբանեմ իրեն կենաց երկար տարիներ, որպէսզի իմամոս գործունեութեան մէջ շարունակեալ անխոնջ սիրովն Քրիստոսի ի Ս. Հաղորդութեան. ըսե՛ք իրեն որ՝ մինչ կը դիմենք իրեն մեր յարգալից ու որդիական յարումին հաւաստիք, քախանձագին կը ինդրենք իւր Առաքելական Օրհնութիւնը մեր ընտանեաց համար, Սպանիոյ համար, հոս ներկայացուած ամեն ժողովրդոց համար »:

Եկեղեցին թնգաց ցնծալից ծափերով եւ աղոթականերով, որոց թնգիւնը կամարներէն սահելով ալիտատան, ելաւ զգրդեց ամբողջ հրապարակը եւ շրջակայ փողոցները, առիւ հիացեալ եւ խանդավառ ամբոխներով :

Յայնժամ Կարգիմալ Պատուիրակը՝ ըստ կանխեալ հրամանի Սրբազան Հօր, Բահանայապետական Օրհնութիւնը տուաւ, եւ Թագաւորն, Թագուհին Կարգիմալն ու Եպիսկոպոսունք, Իշխանք եւ Պաշտօնակալք մեկնեցան ցընծութեան ձայներու մէջ :

Ժողովուրդը գերփառիման խանդիւ Համաժողովին հագեւոր երգովն հնչեցնելով արքայական Ոստանը, տակաւ կը ցրուէին. անպատմելի ցնծութեամբ պատրաստելով սրտերնին հետեւեալ օրուան հիաքանջ թափորին, որ ամենափառաւորներէն մին պիտի արձանագրուի Ս. Հաղորդութեան Համաժողովին տարեգրոց մէջ :

(Շարունակելի)



ԱՊՊՐԻՆԻ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

(Շարունակութիւն)

Յայտարարութիւնը նոյնքան մեկին ու շեշտակի վերաւորում մ'է կաթողիկէ Եկեղեցւոյ սկզբանց, որքան բացայայտ և որոշ բացատրութիւն մ'է նոյն սկզբանց՝ Հովուական թուղթի վարդապետութիւնը։ Որովհետեւ մինչդեռ սա՝ հովուական իշխանութիւնը աստուածագիր և երկնատուր կը հրատարակէ ըստ Ս. Հարց, Տիեզերական ժողովոց և Աւետարանական վարդապետութեան, նա կը մերժէ այդ երկնային ծագումը ու ժողովրդասուր կը հռչակէ. « Ինչ տարօրինակ հակասութիւն... որ Թէրզեան Կ. — Պատրիարքը, ազգային երեսփոխանական ժողովէն ընտրեալ ըլլալով, այժմ չուզեր ճանչնալ այդ ժողովին ընտրողական իրաւունքը »։ — Պատ. պարոնայք, Թէրզեան չի ճանչնար այդ ընտրողական իրաւունքը, որովհետեւ իրմէ առաջ Եկեղեցին զայն ճանչնար, և ասկէ առաջ անոր Աստուածային Հիմնադիրը չի ճանչնար. այս չգիտնալ ու Թէրզեանի մէկ տձնական վարդապետութիւնը նկատել՝ կամ չարաչար տգիտութենէ կամ ոգրալի չարութենէ առաջ կուգայ. առաջինը կը հակասէ ինքզինքնին տուած գիրքին ու պաշտօնին. երկրորդը կաթողիկէ անուան. ահա ո՛ր է և որո՛ւ կողմանէ տարօրինակ հակասութիւնը։ — Հովուական թուղթը Եկեղեցւոյ մէջ ժողովրդական Գերիշխանութեան հապարիցս դատապարտուած սկզբունքը կը նշաւակէ իբրեւ մոլորական, Յայտարարութիւնը ճիշտ այդ սկզբունքը մեծագուր կը հրատարակէ « վարչային ամէն գործոց վրայ ունեցած բարձր » իրաւասութեան անուամբ։ Հովուականը կը քարոզէ բացէն որ ամէն իրաւանց ազբիւր Հռովմայ Ս. Գահն է և անկից միայն կրնան ծագիլ իրաւունքներ ու առանձնաշնորհումներ և թէ Եկեղեցւոյ իրաւունքներն անբռնարարի ին. Յայտարարութիւնը ասոր դէմ կը կանգնէ ժողովրդական անբռնարարի իրաւունքներ մը, որոնց ազբիւրն է միայն ստացումն. և թէ այդ ստացումի դէմ ո՛ր է ոսնձգութիւն, որու կողմանէ ալ փորձուի բացարձակապէս անընդունելի է։ Այս ծանր բացատրութիւնը ուրեմն ըսել կ'ուզէ. Ս. Գահն չէ ազբիւր իրաւանց, այլ ժողովրդական ստացումն, ինչպէս կ'ուզէ ըլլայ սա. և թէ նոյն իսկ Ս. Քահանայապետն այդ ստացումը չի կրնար ջնջել։

Կարելի է երևակայել ասիից աւելի տարօրինակ հսկանութիւն Կաթողիկէ անուան, զոր կ'ուզեն պահել: Այս հակասութեան շինիչ մէկ ցայտումն եղան եկեղեցեաց մէջ գործուած անպատկառ անկարգութիւններն, որոնցմէ վերջ չենք կրնար կեղծել Յայտարարութեան հեղնօրէն հայրապետական շեշտը, որով կը հրաւիրէ մայրաքաղաքի և դաւառի պատ. ժողովուրդը, պահելու իր հանգարտութիւնը և շարունակելու կատարել իր կրօնական պարտաւորութիւնները: Ենթադրել որ ժողովուրդը պիտի խռովի և ետ պիտի կենայ իր կրօնական պարտքերէն Հովուական Կոնգակի վրայ, ասոր դէմ հանգարտութիւնին թոթուելու և կրօնական պարտուց հակառակ անոր դէմ աղմկելու հրաւէր մ'է՝ ո՛վ չի տեսներ. ճարտար հակասութիւն հանգարտութիւն քարոզելով խռովութիւն սերմանել:

Հակասութիւնը, ինչպէս սուտը և սխալը այնքան խորշիկ են, որ նոյն իսկ ամենայանդուզն ու լիրբ ստախօսը իր սուտն իրրեւ ճաշարտութիւն կը ջանայ առաջ տանիլ, ծպտել զայն, անոր անհարթութիւնը ծածկել: Այս ծպտանքն ու ծածկոյթը կրկին է. երկդիմութիւն, թիւրիմացութիւն, որոնք յաճախ բուական են անտեղեակ ու պարզամիտ մտքերու առջև Այոն՝ Ոչ և Ոչն՝ Այո ներկայացնելու: Եւ ահա յայտարարութիւնը ըստ սովորութեան անոր հեղինակներուն՝ երկդիմութեան ու թիւրիմացութեան մէջ օրօրել կը փորձէ ժողովրդեան միտքը, զայն քնացնելու համար և իր զրոյցներն առաջ տանելու համար: Իրօք, հին կանոնագրի ծրագիրը և վերջերս իրենց շարագրած ծրագիրը նոյն կը նկատէ. մինչդեռ Ամեն. Հոգևոր Տէրն այս վերջինին վրայ ծանրացած է և զայս կը դատապարտէ ու կը մերժէ. և անշուշտ այս ծրագիրը նորածին ըլլալով՝ ո՛չ տէրութեան, ո՛չ հանգուցեալ Կարգ. Սիմէոնիներու և ոչ Ազարեաններու հաճութեան, հաւանութեան և հաստատութեան չէր կրնար հանդիպած ըլլալ: Նոր կանոնագրի ծրագիրը ամբողջովին հակակաթողիկէ է և անոր համար ի սպառ դատապարտուած: Իսկ հին ծրագիրն ո՛չ կառավարութենէ, ո՛չ ալ Ս. Աթոռէն հաստատուած չէ, և եթէ ճիշտը կ'ուզուի վերջինս բացէն դատապարտած է անոր եկեղեցական մասը, որուն համար Ազարեան սրբազրութիւններ մուծած է Աւագանւոյ ժողովով, և միայն այդ սրբազրութիւններով գործածուած է և նոյս սրբազրեալ ի գործածութեան եզող կանոնագիրն է միայն, զոր անցեալ տարի ի սէր խաղաղութեան ընդունեցան Սինոդոսական Հարք պայմաններով մը և առժամանակեայ կերպով. որ պայմաններն իրենց կողմանէ ցայսօր պահուած չըլլալով, բնականաբար հիմնովին կը խախտի այդ վերջին վաւերացումն ալ՝ որ վճռական ալ չէր:

Այս ամէն խորհրդածութիւններէ կտքը իրաւունք ունինք բողոքելու այդ յայտարարութեան դէմ և կը յայտարարենք .

ա) Թէ այդ յայտարարութիւնը Կաթողիկոսի հովուական, թղթին դէմ հակակրօնական մ'է .

բ) Օրինաւոր իշխանութեան դէմ ապօրինի իշխանութեան մը հրատարակութիւնն է .

գ) Կաթողիկէ վարդապետութեան դէմ հակակաթողիկէ դաւանութիւն մ'է .

դ) Ժողովուրդը ապստամբեցնելու մարտահրաւեր մ'է ինչպէս կ'որակէր այդ սկզբանց արժանաւոր ջատագովն կրօնամարտ ու կղերամարտ Ազատամարտը .

ե) Ուրացում մ'է Կաթողիկէ Եկեղեցւոյ աստուածաշէն կազմակերպութեան .

զ) Ապստոք խմբակի մը կուսակցական ձգտումն է .

է) Փոքրամասնութեան մը ճիւղական փորձն է Եկեղեցւոյ վրայ .

ը) Աշխարհականացման փորձն է աւանդական իշխանութեան դէմ .

թ) Հերձուածի շարժում մ'է :

Ուստի կը հրաւիրենք այդ յայտարարութեան հեղինակներն, որ աւելի աներկիւղ ու անկեղծ ըլլան և իրենց իւրաքանչիւրի սնուամբ ու մականուամբ ներկայանան և ո'չ թէ ծածկուելով դատապարտեալ չնշուած ժողովի մը հաւաքական անուան ներքեւ և Հայ — Կաթողիկէ Հասարակութեան կողմանէ : — Մեղք է հասարակութեան . խնայելու է Կաթողիկէ ժողովրդեան, որուն իրենք չեն կրնար ոչ ներկայացուցիչ, ո'չ հաւատարիմ թարգման ըլլալ :

Փող

ԲՈՐԹՈՒԳԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԲՈՂՈՔԸ

(Շարունակութիւն)

« Դատապարտութեան վճիռն արձակուեցաւ՝ Բորթուգայի Հանրապետութեան անժամեայ Կառավարութեան հրամանագրով՝ ի 20 Ապրիլի, 1911, Պատմութիւնը արժանաւոր խտտութեամբ պիտի դատէ այս գործը . և քաղաքակիրթ ազգերն, մինչև իսկ անոնք որոնց ծոցին մէջ խորապէր թափանցած է հակակղերականութիւնը, ապշահար պիտի մնան այս վճիռոյն »

ի յայտ բերած ձրի ատելութեան և անքաղաքագէտ բռնութեան առջև — առանց խօսելու անոր ցոյց տուած ապերախտութեան վրայ :

Ձրի ատելութիւն . բարթուգալցի կղերը նոր վարչութեան ընթացքին առջև խոչընդոտներ չյարոյց . ի՞նչ պատճառ կար ուրեմն այսպէս հարուածելու և վարկաբեկելու խաղաղասէր քաղաքացիներու ամբողջ դասակարգ մը , և զժպտութեան ու խռովութեան նոր սերմ մըն ալ ցանելու բորթուգալցի ընկերութեան դաշտին մէջ : . . .

Յարմար էր միթէ սոյնօրինակ կարգադրութիւն մը երբ ամէն ինչ կը թուէր ներշնչել հաշտութեան , համաձայնութեան , և կարգապահութեան ու խաղաղութեան ապահովական միջոցներ : . . .

Գաղղիոյ Հանրապետութեան մէջ վարչութիւնը տատամեցան 35 տարի . և խնդիրը բազմակողմանի տեսութեամբ վիճարանեցաւ խորհրդարանի մէջ : Կարեւր չէ՞ր միթէ Բորթուգալի մէջ ալ սպասել դեռ քանի մը ամիս կամ քանի մը օր աւելի : — Հարկ էր , անհրաժեշտ էր , պէտք մըն էր՝ դիկտատորական ժամանակամիջոցը չաւարտած , տալ հարուածը :

Կաթողիկէ Եկեղեցւոյ Գերագոյն Գլխոյն հանդէպ ամենափոքր ակնածութիւն իսկ չունեցան՝ խորտակելէ ու ջնջելէ առաջ Գօնդօրտաթան , որ՝ ինչպէս միջազգային ամէն պայմանք , երկակողմանի դաշնադրութեան մըն է , զոր մէկ կողմը չկրնար օրինաւորապէս ոչնչացնել՝ միւսին հետ առանց համաձայնութեան :

Եւ ոչ իսկ խորհեցան , գո՛նէ ինչպէս ի Գաղղիա , պատրուակներ և սամբատանութեաններ որոնք Բաժանման տային՝ պարագայներէ հարկադրուած և հանրային կարծիքէն պահանջուած կարգադրութեան մը երևոյթը » :

(Շարունակելի)

ՏԵՂԵԿԱԳԻՐԱԿԱՆ

Ամենասարսիւ Պօղոս Պետրոս ԺԳ . Թեղեակնի

Ճանապարհորդութիւնն ի Հռոմ

(Շարունակութիւն)

Մայիս մէկը պատմական պիտի ըլլայ Հայ — Կաթողիկէ Եկեղեցւոյ համար . այն օր՝ ինչպէս խոստացած էր Ս . Քահանայապետն՝ իր առանձին մատրան մէջ Պալիումը շնորհեց հետեւեալ արարողութեամբ : Առա-

առտեան ժամը 6:30 ին՝ Ս. Քահանայապետը թիւ Պատարագն սկսաւ, որուն ներկայ էին առաջին կարգին վրայ Հոգեւոր Տէրն, Արհի. Թէոսորովիչ Լէմպերկի հայ Արքեպիսկոպոսը և Գոյունեան Արքեպս. երկրորդ կարգին մէջ Մօնս. Ռոլլէրի և Sacra Rota այսինքն դատարանական Ատենիսի պաշտօնեայ մը, ասոնց կը յաջորդէին Լեոնեան վարժարանի մեծաւորն ու աշակերտները, Ուրբանեան վարժարանի հայ աշակերտներն: Աշակերտք հազորդուեցոն Սրբազան Քահանայապետին ձեռքէն: Պատարագը աւարտելուն Հոգեւոր Տէրն հայրապետական զգեստներն հագուած երկու ընթերակոյ՝ Արքեպիսկոպոսներով կը ներկայանայ Ս. Քահանայապետին որ խորանին առջեւ նստած էր. կը կարգայ սովորեալ հաւատոյ դաւանութեան ձեւն և Նորին Սրբութիւնն արարողական ձեւն արտասանելով կուտայ Պաշիումն. և ապա Հոգեւոր Տիրոջ հետ գրկախառն կ'ողջագուրուի և այսպէս կ'աւարտի հանդէսն: Երրորդ Պատրիարքն է մեր նուիրապետութեան որ այսպէս ուղղակի Ս. Քահանայապետէն կ'ընդունի Պաշիումն. առաջինն է նոյն ինքն Արքանամ Պետրոս Ա. երկրորդն Անտոն Պետրոս Թ. Հասուն:

Այս Հանդէսին յաջորդ կիրակէն Լեոնեան վարժարանը չքեղօրէն տօնեց իր սիրելի Կաթողիկոսին այս առանձնաշնորհումն՝ ընդունելու զՊաշիումն ուղղակի Ս. Քահանայապետէն, և այդ առթիւ այլ և այլ լեզուներով ականաւոր հրաւիրեալներու առջեւ երեւան հանեց Թէրզեան Կաթողիկոսի ձիրքերն, զոր շարունակ կը ներշնչէ նոյն իսկ իր գիմազծովն՝ Նուագածուններու խումբ մը կ'ընկերակցէր աշակերտաց եռաձայն երգերուն, մին « Սերն Քրիստոսի սխիպե զմեզ » տխրոտով՝ այս առթիւ շարադրուած էր: Դպրոցիս երկայն սրահներէն մին զարդարուած էր Սարնի մը ոճով և հոն հաւաքուած էր ընտիր բազմութիւն մը: Ակագիմիայէն հսփք սեղան տրուեցաւ, յորում Հոգեւոր Տէրն փառաւոր բաժակաճառ մը արտասանեց ի չընորհակալութիւն մանաւանդ Ս. Քահանայապետի, և Մօնս. Ռոլլէրի պատասխանելով զրուատեց Թէրզեան Կաթողիկոսի բարի ձիրքերն: — Լեոնեան Դպրոցը նոյն առաւօտ տուած էր հետեւեալ հեռագիրն առ Կարդ. Մէրի տէլ վալ:

Քահանայապետական Լեոնեան Հայ Դպրոցը, այսօր խճառած էր Պատրիարքին շորջը Ս. Քահանայապետին անձնական յետքերն Ս. Պաշիումն ընդունելու հանգիստը, կը յայտնէ Երաբարգիտութիւն, անպայան յարոս գերաբոյն Իշխանութեաւ. որքեան օր և ժամանակ առ անհետքեր Սրբազան Հայրն. խորհելով առաքելական Օրհնութիւն:

Նագիթան, Մեծաւոր

Ասոր պատասխանն եկաւ ուղղակի կաթողիկոսին այսպէս .

Սրբազան Քահանայապետ, Ռեքտէս Գեղ՝ Ս. Պալէմի շնորհման Գնահատման Դեմոստրացիոն Լեւոնեան Վերջաբանի Տեղադրութիւն և աշխարհաց արտայայտած արդիւններն ու Ռեքտէսի, շնորհակալութեան կը յայտնէ Ձեր Գերբերանկալութեան և Կ'օրհնէ Բոլոր շնորհման արդի, կրօնական և բարոյական բարոյութեան և շնորհաբարութեան :

Կարդ. Մերի skj Վալ

Շատ մը ՎՎ. Կարդինալներէ զատ եկան իրենց այցելութեան Օսմանեան դեսպանը և Գաղղիոյ դեսպանը : Այս վերջինը արտասովոր բարեացակամութիւն ցոյց տուաւ : Այս ամէնը յոյս կը ներշնչեն իր ազգագուտ ու անձնագործ գործոց : — Վստահ ենք որ մեր ակնկալութիւններն պիտի պատկուին հակառակ ամէն ոտնձգութեանց :

Այնուհետեւ սկսաւ պատրաստուիլ մեկնելու . որովհետեւ ժամանակն ստիպող էր և եռանդուն Հովիւն գիտնալով մեկտեղ թէ ո՛րքան դժուարութեանց պիտի բաղխէր, օր առաջ մեկնիլ ուզեց և մեկնեցաւ Մայիս 12ին :

Արդարութեան Նախարարութեան Պաշտօնական մեկ Հերժումը

Պաշտօնական տեղեկութեանց չարքին մէջ մէկ կարեւոր ծանուցում մը հրատարակած է « Բէնիւն » թերթը իւր 13—1028 թուոյն մէջ : Ազատամարտ և Մէճմուա, որոնք անդադար նախատալից և սուտումուտ բաներ կը գրեն օրինաւոր հոգեւոր իշխանութեան դէմ և երբ անոր հակառակ բան մը կայ, անխիղճ ուրախութեամբ կը չափազանցեն՝ անիրաւ դատի մը պաշտպանութիւնը՝ աւելի մեծ անիրաւութեանց մէջ փնտռելով, ըստ իրենց սովորութեան սակայն կը լռեն ճշմարիտն ու լաւը և նպաստաւորը, ինչպէս լռեցին — որչափ գիտենք — տարածայնուած ստութեանց դէմ յիշեալ պաշտօնական հերքումը՝ Արդարութեան Նախարարութեան, Արհի. Ճամհեան Եպ.ի տեսակցութեան առթիւ : Աս թերթերն այսպէս կը ծառայեն ճշմարտութեան (!) : Սակայն մենք հարկ կը դատենք այս հերքումը թարգմանաբար գնել հոս, ի շինութիւն գայթակղեալ մտաց :

« Սապահ թերթը իւր 327 թիւին մէջ 24 Յունիս — 7 Յուլիս թուականաւ հրատարակած էր լուր մը, իբրեւ թէ Հայ-Կաթողիկէ Կ. Պատրիարքական փախ. ճամհեան Եպ. գեկուցագրով մը Արդարութեան Նախարարութենէն կանչուած ըլլալով, իրեն

զեկուցուած ըլլայ թէ Ամենապ. Թեոքեան Պատրիարքը պէտք է կանչուի ի Պօլիս որպէս զի համար տայ իր գործոց և տրամատրութեանց վրայ: և թէ Կրօնից Տեսուչին կողմանէ ևս յիշեալ Պատրիարքին գործառնութեանց դէմ քանի մը առարկութիւններ ներկայացուած ըլլան, բաց աստի « Աթաթուլաթ » թերթին՝ Սթամպուլէ լրագրէն քաղելով քրած էր թէ՛ վերոյիշեալ Պատրիարքական փոխանորդն Արդարը թեան Նախարարութիւնէն հրաւիրուած և Ամենապ. Պատրիարքին գործերակերպին վրայօք իրմէն տեղեկութիւն պահանջուած, և նորա փութով ի Պօլիս վերադարձին հարկաւորութիւնը խիստ լեղուով արտայայտուած ըլլայ:

Սոյն եղելութեան վրայ Արդարութեան Նախարարութիւնը հետեւեալ ըսցատրութիւնը կուտայ. « Թէ պէտեւ մասնաւոր թոյլտուութեամբ արդ և այժմ յետպա գտնուող յիշեալ Ամենապ. Պատրիարքին և ժողովրդեան քանի մը անհատներուն միջև միջև մէկ աստիճան թիւրիմացութիւն գոյացած ըլլալը կը չըջարեղուի, և որպէս զի յիշեալ Ամենապ. Պատրիարքին ճամբորդութիւնն շարունակուելով պատահական ըանակցութեանց և խորհրդակցութեանց պատճառաւ ներկայ խնդիրը անհամաձայնութեան ձև մը չկարենայ առնուլ, իւր ի Կ. Պօլիս վերադարձին պատշաճութիւնը՝ Նախարարութեան կողմանէ Պատրիարքական փոխանորդին անպաշտօն եղանակաւ յանձնարարուած և հասկցուցուած էր, սակայն մինչև ցարդ այս թիւրիմացութեան ըսկզբնաւորութեան ու բնոյթին վրայօք ո՛չ յանուն Պատրիարքարանի և ոչ յանուն ժողովրդեան Նախարարութեան պաշտօնական դիմում մը և յայտարարութիւն մը տեղի ունեցած չըլլալով, իրաց ստոյգ կացութիւնը արարագայնեցող իրեն ծանօթ չէ, և հետեւաբար երկուց կողմանց միոյն դէմ առարկութիւններ յարուցանելու և ազդու լեզու գործածելու քնաւ ամենևին տեղի չկայ. ուստի այս տեսակ արարք մը բնականաբար պատահած չէ. և յիշեալ փոխանորդը այս գործոյս համար պաշտօնական հրաւիրագրով չէ կոչուած, և իրմէն քնաւ չէ պահանջուած ո՛ր և է լուսարանութիւն Ամենապ. Պատրիարքին գործելու եղանակին վրայ »:

Ամսոյս 23 ին, Օսմանեան Սահմանադրութեան Տօնին առթիւ, չքեղ ընդունելութիւն մը կատարուեցաւ Հռոմայ Օսմ. ղեկավարատան մէջ՝ վսեմ. Դեսպանը արձակուողով կը գտնուէր ի Կ. Պօլիս, հետեւաբար ընդունեց վսեմ. Սէյֆէտտին, որուն կ'ընկերանար Նաւային կցորդ Բամիզ Պէյ, Ներկայ էր Հռոմայ մէջ գտնուող Օսմանեան Գաղթընթը՝ որոյ գլուխը կը գտնուէր Արհ. Պետրոս Արք. Գոյունեան. որ քարեմաղթութիւններ բրաւ վեհափառ և սիրեցեալ Սուլթանին արեւաշատութեան և երջանկութեան համար. սիրալիր խօսքերով պատասխանեց Սէյֆէտտին Պէյին և հրաւիրեալները առաջնորդեց փառաւոր Պիւֆէի մ'առջև. ուր զարձեալ ներկայից կողմանէ բարեմաղթութիւններն կրկնուեցան կեցցեաներով:

Փ. Պիսմիի
Տնօրէն Պատասխանատուն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հանժողով Ամենասուրբ Հայոցդոքեան Ի Մարիս	էջ 59
Ապօրինի և անսրժան յոյճարարութիւն մը	» 64
Բորբուգայի Եպիսկոպոսաց Բողոքը	» 66
Տեղեկագրամսն. — Ամենայ. Թեոքեանի Դպրոսն ի Հռոմ	» 67
Այլ և այլ	» 69